Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

16786

323.1/47)
Ч-37

Գրադարան «Յառաջ»-ի № 13

ԿԱՐԼ ԿԱՈՒՑԿԻ

ԱԶԳՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Թարգմ. գերմ. Գ. Խաժակ.

Թարգմանչի ծանօթ.

6-րդ հազար

1906
ԹԻՖԼԻՍ

323.1(47)
4-37

4 FEB 2014
323.1(47)
4-37
2 6 SEP 2006
15 JAN 2010

№ 13 «Յառաջ-ի գրադարան» № 13

ԱԶԳՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

I

Իմ հայ բարեկամները խնդրեցին ինձ մի քանի խօսք ա-
ռաջաբան գրել Էրֆուրտի պրօգրամի մասին ունեցած իմ գր-
քի հայերէն թարգմանութեան համար՝ ազգային հարցի մասին,
որ հայ սօցիալիստների համար յատկապէս այժմ առանձնա-
պէս մեծ նշանակութիւն ունի։

Բնականաբար անկարելի է սպասել ազգային հարցը մի
քանի երես տեղ բռնող մի ուսումնասիրութեան մէջ։ Ազգը
խօս բնութիւնից տրւած մի համայնք չէ, ինչպէս ընդունում
են այդ Ռասսային թէօրիա դաւանողները, այլ մի ընկերական
կամ հասարակական ստեղծւածք կամ մարմին, որը կազմւում
է զանազան ժամանակներում, զանազան պայմանների ազդե-
ցութեան տակ, որը խիստ բազմազան ձևեր է ընդունում և
մշտապէս գտնւում է պատմական հոսանքի կամ փոփոխման մէջ։
Նոյն իսկ այժմեան կուլտուրական ժողովրդների մէջ ազգու-
թեան գաղափարը համաձայն ամեն մի ազգի պատմական զար-
գացման, շատ տարբեր է, և մեր ամեն մի միջազգային կօնգ-
րէսը լաւ տեղեակ է այն դժուարութիւններին, որոնք առաջանում
են այդ գաղափարից։ Ֆրանսիական, Իռլանդական, Աւստրա-
լական, հրէական, հայկական ազգութիւնները բոլորովին տար-
բեր նշանակութիւններ ունեն՝ ամեն մէկն առանձին-առանձին
վերցրած։

Սակայն՝ որքան էլ որ տարբեր լինեն ազգութիւնների
պատմական ծագումն ու բաղդը, կրկին մի ընդհանուր նշան
ունի նրանցից ամեն մէկը—դա լեզւի ընդհանրութիւնն է։ Միև-
նոյն լեզւով խօսող բոլոր ժողովրդները ամեն ժամանակ ան-
պատճառ մի ազգ չեն կազմում, սակայն միևնոյն ազգի բոլոր
անդամները միշտ խօսում են, միևնոյն լեզւով։ Լեզուն, ուրեմն,
ամենաէական հասարակական կապող տարրն է, առանց լեզւի
ընդհանրութեան անհնարին է որև է հասարակական հանրա-
կեցութեան գոյութիւնը։

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
2231-74

16786

Սակայն լեզուական համայնքը կամ ընդհանրութիւնը անհրաժեշտաբար միշտ չէ համապատասխանում պետական համայնքին կամ ընդհանրութեանը։ Դրանից ծագում են հակասութիւններ, որոնք և կազմում են նորագոյն ազգայնական հարցերը։

Կապիտալիստական արդիւնագործութեան եղանակի ծնունդից առաջ մի պետութիւն կարող էր, առանց որև է դժարութեան բազմազան ազգեր պարունակել իր մէջ։ Մի այդպիսի պետութիւն, օրինակ մի միջնադարեան կամ մի արևելեան պետութիւն, կազմում էր մի հաւաքածու բազմազան համայնքների, շրջանների և հողային համայնքների, որոնք իրար հետ ամենաչնչին յարաբերութիւններ ունէին, իրանք էին կարգադրում իրանց ներքին յարաբերութիւնները, ամեն մէկն առանձին յարաբերութիւն էր պահպանում կենտրոնական իշխանութեան հետ, մի յարաբերութիւն, որը վերաբերում էր (drehen) միմիայն վճարելիք հարկի քանակութեանը, հարկի, որը կենտրոնական իշխանութիւնը ինչ ուզէր կանէր։ Այդ համայնքներից կամ ընկերութիւններից ամեն մէկը կարող էր մի-մի ուրիշ ազգութեան պատկանել, իսկ կենտրոնական իշխանութիւնն էլ մի տարբեր ազգութեան—դա մի նշանակութիւն չունէր։ Այդ պատճառով էլ այդպիսի պետութիւնների ներքին կապը շատ չնչին էր։ Մի երջանիկ աշխարակալ մի օրում կարող էր կազմել մի համաշխարային կայսրութիւն. մի անյաջող ճակատամարտ կորցրել էր մի այդպիսի պետութիւն հազարաւոր մասերի բաժանել։

Կապիտալիստական արդիւնագործութիւնը և առևտրի զարգացումը սկսում են առաջացնել մի կենդանի յարաբերութիւն մի պետութեան զանազան համայնքների և գիւղերի և նրա առևտրական ու արդիւնագործական կենտրոնների միջև. նա ոչնչացրեց գաւառների ու վայրերի առանձնութիւնը կամ մեկուսացած վիճակը, ստեղծեց նրանց մէջ ամենասերտ հաղորդակցութիւն և առաջացրեց հետաքրքրութիւն դէպի պետութեան վարչութիւնը նախևառաջ կապիտալիստական արդիւնագործութեան ամենից մօտ կանգնած դասակարգերում—կապիտալիստների, ինտելլիգենցիայի, ինդուստրիական պրոլետարիատի, մեծ քաղաքների մանր բուրժուաների մէջ, յետոյ կամաց-կամաց նաև փոքր քաղաքների մանր բուրժուական ազգաբնակութեան և գիւղացիութեան մէջ։ Այդպիսով ներքին,

դէմոկրատիական դասակարգերում տարածւում է դէմոկրատիական ձգտումը պետութեան վրայ ևս, այն ինչ առաջ միայն նա տարածւում էր գիւղի և համայնքի վրայ։ Ծնունդ է առնում պետութիւնը դէմոկրատիարար վերակազմելու ձգտումը։ Սակայն միևնոյն ժամանակ ազգային տարբերութիւնները աւելի և աւելի են ընդհարման մտնում պետական միութեան ձգտման հետ։ Ամենակենսունակ են զգում և ամենից ուժեղ համարում իրանց այն պետութիւնները, որոնց մէջ մի լեզուով են խօսում բոլորը։ Բազմալեզու պետութեան մէջ ծնունդ է առնում ազգութիւնների կռիւ իրար մէջ։ Որովհետև նորագոյն պետական միութիւնը ամեն բանում ձգտում է ցոյց տալիս, որ կապակցութեան ամենաէական միջոցը լեզուն՝ իր պետութեան ներսում մէկ լինի, դրա համար պետական վարչութիւնը, դատավարութիւնը, կրթութիւնը աշխատում են կատարել միևնոյն լեզուով։ Այն ազգութիւնը, որի լեզուն դրանով առաջ է քաշւում, ձեռք է բերում քաղաքական և տնտեսական նշանաւոր առաւելութիւններ միւս ազգութիւններից։ Բնականաբար դա առաջ է բերում ամենակատաղի դիմադրութիւն միւս ջոկուած ազգութիւնների կողմից։

Ինչ չափով որ զարգանում է արդիւնաբերութեան կապիտալիստական եղանակը, ինչ չափով որ զօրեղանում է ժամանակակից միացեալ պետութիւն կազմելու ձգտումը, այն չափով էլ այդպիսի պետութեան խորքերում աճում են ոչ միայն պետական դէմոկրատիական ձգտումները, այլ, եթէ պետութեան բնակիչները մի քանի ազգութիւնների են պատկանում, նաև ազգային կռիւները։ Այդ երկու ձգտումները ևս նոյն ժամանակակից շարժումների հետ։

Միւս կողմից հաղորդակցութեան զարգացումը աւելի դիւրացնում է գաղափարական յարաբերութիւնը միևնոյն ազգին պատկանող, բայց տարբեր պետական կազմակերպութիւնների մէջ ապրող մարդկանց միջև։ Եւ որչափ ուժեղ է ազգասիրութեան կռիւը, այնչափ էլ մի ազգութիւն աւելի կարիք է զգում իր բաժան-բաժան մասերը սերտօրէն կապելու իրար հետ, համարելով այդ իրրև ամենալաւ միջոցը ազգային ուժերը զարգացնելու։ Այսպէս ուրեմն արդիւնաբերութեան կապիտալիստական եղանակը ձգտում է տարբեր և սահմանակից պետու-

թիւնների մէջ ապրող միևնոյն ազգութեան բաժան-բաժան մասերը միացնել, անջատ տէրրիտորիաներից կազմել մի ընդհարձակ պետական մարմին, ուրիշ խօսքով՝ անջատել նրանց մինչև այժմ պատկանած պետական կազմերից։

Ազգային շարժումն էլ անհրաժեշտաբար ծագում է ժամանակակից տնտեսական զարգացումից. այդ շարժման առաջ պատնէշ կանգնեցնել անկարելի է, ինչպէս որ անկարելի է տնտեսական զարգացումը խափանել։ Այն երկրներում, ուր ազգային ձգտումները կռիւ են մղում իրանց գոյութեան համար, այնտեղ էլ ամեն մի ժամանակակից կուսակցութիւն, դրանց բռնում նաև պրոլետարիատի ներկայացուցիչ սոցիալ դէմոկրատիան, անհրաժեշտաբար հաշուի պիտի առնի այս հանգամանքը. նա նպաստող պիտի հանդիսանայ նմանապէս ամեն մի ձգտման, որ ուզում է պետական կազմին դէմոկրատ կերպարանք տալ, որ նպատակադրում է առանձին-առանձին ազգերի պետական միացումը և անկախութիւնը։ Հէնց այս մտքով էլ սոցիալ դէմոկրատիան պիտի լինի և՛ ազգային և՛ դէմոկրատիական։

Բայց ինչպէս որ սոցիալ դէմոկրատեան չէ կարող և իրաւունք էլ չունի դառնալու մի բուրժուական դէմոկրատիական կուսակցութիւն հէնց այդպէս էլ նա չէ կարող և իրաւունք չունի ազգայնական լինել այն մտքով, ինչպէս որ են իշխող դասակարգերը։ Կուսակցութեան ազգային և դէմոկրատիական քաղաքականութիւնը համաձայն պիտի լինի պրոլետարական դասակարգային կռուի էութեան հետ և դրանով էլ նա պէտք է ստանայ իր առանձնայատուկ դրշմը։

Ամենից առաջ սոցիալ դէմոկրատեան բնականաբար ընդդէմ պիտի լինի այն ռէակցիօնէր նացիօնալիզմին, որի ներկայացուցիչներն հանդիսանում են տնտեսապէս յետամնաց դասակարգերը՝—ազնուականութիւնը, մանր բուրժուազիան և նրանց իդէօլոգները։ Այդ մարդիկ ջանում են ազգային ձգտումները բացատրել ոչ թէ իբրև նոր, ժամանակակից յարաբերութիւններից և պայմաններից ծագած մի բան, այլ իբրև հին աւանդութիւնների ծնունդ, *) որոնց նրանք վերակենդանացնել են ցանկանում։

*) Այդ խնդիրը սոցիալօգիայի մէջ վերին աստիճանի մի կասկածելի ու վիճելի հարց է։ Ընդունելով միանգամայն, որ ազգութիւնը փոփոխութեան է ենթարկւում յարաճուն տնտեսական պայմանների ազդեցութեան

Այդ ձգտումը կարող է փառաւոր անցեալ ունեցող մի ազգի մէջ երբեմն գրաւել նաև այնպիսի իդէօլոգների, որոնք ուրիշ հարցերում ամենևին ռէակցիօնէր չեն։

Այսպէս օրինակ՝ գերմանական լիբերալները սիրում էին գերմանական միութիւնը երևակայել իբրև վերակենդանացում միջնադարեան գերմանական կայսրութեան։ Չեխերը, նրանց նոյն իսկ էապէս դէմոկրատ ներկայացուցիչները, շատ կը ցանկանային Բոհեմական թագաւորների պետութիւնը վերականգնել։ Լեհերի մէջ դեռ այսօր էլ կենդանի է հին լեհաստանը վերականգնելու ցնորքը։ Ի՞նչ են մտածում այդ մասին հայերը ես չը գիտեմ, սակայն ենթադրում եմ, նրանք էլ այդ ձևով են մտածում։ Սակայն պէտք է յիշատակել, որ այդ հին պետութիւնները ազգային պետութիւններ չէին՝ այդ բառի ժամանակակից մտքով, որովհետև արդիւնաբերութեան կապիտալիստական եղանակից առաջ պետութեան հիմքերը բոլորովին տարբեր էին. նրանք ամենևին ազգային չէին։ Գերման ազգի հռոմէական պետութիւնը, ուր իշխում էին Հոհէնշտաուֆինները, տարածւում էր Դանէմարքից մինչև Սիկիլիա Պրագայում նստող Պրժէ միսլովիչները իրանց ամբարձր զօրութեան շրջանում տիրում էին Սիզէնգիբերգից սկսած մինչև ադրիատիական ծովը, ուրեմն՝ համարեա ամբողջ այսօրուան Աւստրիան, մէջը չը հաշուած Վենգրեան և Գալիցեան։ Լեհական եագելլոնների պետութիւնը տարածւում էր Պոզնանից մինչև Կիև և Նովգոտակ. ընդունելով, Կաուցկու ասածի համաձայն, որ այդ գաղափարի զարգացման ներկայ փազիսը ոչ այլ ինչ է, եթէ ոչ արդիւնք ներկայում գոյութիւն ունեցող տնտեսական խոշոր փակտօրների և դասակարգերի յարաբերութիւնների, մենք չենք կարող չընդունել նաև այն ակներև ճշմարտութիւնը, որ ազգութեան գաղափարը երեկ չէ ծնել, ոչ էլ կապիտալիզմի երևալու օրից (XVI դարից). նա եղել է առաջ էլ—հին Յունաստանում, Հռոմում, Աքէմենեան Պարսկաստանում, Տիգրան մեծի Հայաստանում։ Ճըշմարիտ է, ազգութեան գաղափարն այն ժամանակ տարբեր է եղել այժմեան ազգութեան գաղափարից, բայց չէ՞ որ ազգութեան գաղափարն էլ, ինչպէս ամեն մի գաղափար ու երևոյթ բնութեան մէջ՝ աստիճանաբար է ենթարկւում համեմատած իւր զարգացման նախընթաց և յետնորդ փազիսների հետ։ Ազգութեան գաղափարի ներկայ ձևը, ճշմարիտ է, երէկ չը կար, բայց նա ձևափոխւել, զարգացել է երեկւայ գաղափարի մի քիչ տարբեր փազիսից։ Ուրանալ ազգութեան գաղափարի էւոլիւցիան, կը նշանակէ չընդունել այդ գաղափարի վերաբերմամբ մեծ ուսուցչի—Մարքսի դիալէքտիկան միայն մի հարցում—ազգութեան գաղափարի աստիճանական զարգացման խնդրում։

Խաժակ

ըոդ և իր մէջ պարունակում էր ոչ միայն Գերմաններ, այլ և լիտուսացիներ, ռուսներ ու կոզակներ։ Ճիշտ այդպէս էլ Տիգրան Մեծի հայկական պետութիւնը պարունակում էր բազմազան և բազմաթիւ արևելեան ազգութիւններ։

Փառաւոր անցեալը վերակենդանացնել՝ կը նշանակէ մուժիաներին էլէքտրականութիւնով կենդանութիւն տալ։ Սակայն այդ մասին երազելն անգամ ֆնասակար է, որովհետև այդ դէպքում աչքաթող են արուում իրականութեան պայմանները և առաջ են մղուում յետադէմ ձգտումները։

Սակայն սոցիալ դեմոկրատեան չէ կարող առանց այլեւայլութեան յարել բուրժուական կուսակցութիւնների ժամանակակից ձգտման՝ կազմելու իսկական ազգային պետութիւն։

Եթէ սոցիալ դէմոկրատեան մի կողմից արդարացի պիտի համարէ և հաշուի առնէ անգամ ամեն մի ձգտում ազգային անկախութիւն ստեղծելու,—միւս կողմից նա չէ կարող նեցուկ դառնալ այդ ձգտման բոլոր եղանակներին ու ձևերին, իսկ այդ ձևերն էլ կարող են շատ զանազանակերպ լինել։

Այսպէս օրինակ ռուսական սահմանագաւառներում ապրող զանազան ազգութիւններ՝ ֆիններ, Լիտվանացիներ, Լեհեր, ռուսիններ, Կովկասեան զանազան ժողովրդներ,—այդ բոլորը բուռն ձգտում ունեն ստեղծելու իրանց համար անկախութիւն նրանք ձգտում են կտրել ամեն մի պետական յարաբերութիւն ռուսական կայսրութեան հետ, ջանում են անջատուել Ռուսաստանից և ձեռք բերել պետական կատարեալ անկախութիւն *)։

Սակայն այդ այդպէս է միայն ինքնակալ Ռուսաստանի վերաբերմամբ։ Եթէ նրա փոխարէն վաղն ստեղծուի դէմոկրատիական Ռուսաստան։ Այն ժամանակ ազգերի ազատագրական ձգտումներն էլ կը սահմանափակուեն նրանով, որ ազգերը կը մնան ռուսական պետութեան դաշնակցութեան մէջ, սակայն կը կերպարանափոխուի պետութեան կազմը, կը տան նրան դաշնակցական պետութեան բնաւորութիւնը՝ իբրև «Ռուսաստանի միացեալ նահանգներ»։

Այդ կարող էր շահաւէտ լինել նոյն իսկ առանձին-առանձին ազգութիւնների համար։ Անգլիական կղզեանները Անգլեայի հետ կապողն այն իրողութիւնն է, որ նրանց անկախութիւնը անհամեմատ աւելի ապահով է զօրեղ մայր երկրի հետ կապ պահպանելով, քան անջատուելով նրանից՝ մնալ զանազան մեծ պետութիւնների առջև մենակ կանգնած։

Այդպիսի նկատումով կարող կը լինէր Ռուսաստանի սահմաններում ապրող ամենազօրեղ և զգայուն ազգութիւնն իսկ նպատակայարմար համարել ռուսական պետութեան կազմի մէջ մնալ։ Հէնց լեհերի—նոյնը և հայերի—վերաբերմամբ ազգային հարցը չէ կայանում սոսկ նրանում, որ ցարի պետութիւնից ազատուեն. այլ նաև ազգութեան՝ բաժան-բաժան մասերը մի ընդհանուր պետական կազմի մէջ մտնէին։ Իրականութեան մէջ ինչ կերպարանք էլ սահմանուլու լինի այդ ձգտումը՝ յամենայն դէպս լեհերը, նաև հայերը աւելի շուտ կը հասնեն իրանց նպատակին, եթէ նրանց նեցուկ լինի մի զօրեղ Ռուսաստան, քան եթէ այդ պետութիւնը նրանց դէմ կանգնած լինի։

Թէ արդեօք լեհերի և Ռուսաստանի ուրիշ ծայրագաւառողանայ սեփական պետութիւն կազմել։ Նրա համար մնում է միայն մի ելք, մի ճանապարհ—վերանորոգած դէմոկրատիական և ազատ Ռուսաստան, իսկ հայը այդ ազատ և հզօր պետութեան մի մասը մի ազակենտրոնացած գաւառը, տեղական լայն ինքնավարութիւնով և օրէնսդրական իրաւունքով։

Անխիղճ Սուվորինը, Վելիչկոն ներկայ բիւրոկրատեան միայն վերագրում են հային Մեծն Հայաստանը վերստեղծելու յիմարական ցնորքը՝ հայի ուզածն է Եւրոպական ազատ քաղաքական կայմ և խաղաղ կուլտուրական զարգացում՝ ձնոք-ձեռքի տուած գրացի ու դաշնակից ազգերի հետ։

Սակայն Կաուցկին սխալ ենթադրութիւններ անելով հայերի ներկայի մասին, հիանալի սրամտութեամբ ըմբռնում է նրանց մտաւոր ապագայի ձգտումը և հետևեալ տողերում տաղանդաւոր կերպով արտայայտում է նրան։

Խոժակ

*) Հեղինակն այդ հարցում լաւ չէ ըմբռնել հայերի բացառիկ վիճակը, որովհետև ծանօթ չէ հայ ազգի մտաւոր և նոյն իսկ հեռաւոր անցեալի նրա ներկայ պայմանների հետ։ Այդ բոլոր երազները կարող են գոյութիւն ունենալ ֆինլանդացու, լատիշի, լեհացու, գլխում. նրանք կարող են նոյն իսկ ճշմարտանման երևալ վրացու վերաբերմամբ, բայց հայի համար այդ չէ կարելի նոյն իսկ հաւանական համարել. սեպարատիզմը, նրա մասին նոյն իսկ երազելը կորստաբեր է հայի համար։ Նա չունի ոչ մի տեղ մի խոշոր, միապաղաղ և միաձուլ մասսա, քիչ ու շատ զուտ, սեփական տերիտորիա։ Թէ հայկական բարձրավանդակում և թէ Կովկասում նա չափազանց արդէն համաշխարհայնել է, այսինքն՝ չափազանց արդէն ցրիւ եկել տարածուել, խառնուել է շրջապատ ազգերի հետ, որպէս զի երազել կա-

ների ազգութիւնների ձգտումները նրանով կը վերջանան, որ այդ ժանը ազգութիւնները կանջատուեն պետութիւնից, թէ ընդհակառակը պետական կազմը ի վերջոյ ֆեդերատիւ կերպարանք կը ստանայ՝ դա կախուած կը լինի այն հանգամանքից թէ ինչ կերպարանք կընդունէ յեղափոխութիւնը Ռուսիայի ներքին նահանգներում, վերև ես յիշատակեցի Անգլիայի և իր գաղութների մէջ եղած բարեկամական յարաբերութիւնը։ Այդ յարաբերութիւնը անհնարին բանը կը լինէր մի բիւրօկրատիական և կենտրօնացման ըէժիմին հետևող պետութեան մէջ։ Նա հնարաւոր է միմիայն մի դեմօկրատիական պետութեան մէջ։ Որչափ աւելի մեծ մասնակցութիւն ունենայ պրօլետարիատը ռուսական յեղափոխութեան մէջ, որչափ յեղափոխութիւնը ոչ սոսկ լիբերալ, այլ իսկապէս դեմօկրատիական լինի, այնչափ էլ ծայրագաւառների ժողովրդները աւելի մեծ սիրով կը կաժենան պետութեան հետ կապած մնալ, այնչափ էլ նրանք կը գերադասեն ազատ դաշնակցութիւնը այդ պետութեան հետ, քան կռիւը նրա դէմ։ Իսկ ընդհակառակը, որքան քիչ յաջողութիւն ունենայ ներկայ ըէժիմը ներքին Ռուսաստանում բարեփոխութիւններ մտցնելու, այնքան աւելի մեծ հաւանականութիւն կայ, որ յեղափոխութիւնը ծայրագաւառներում սեպարատիստ բնաւորութիւն կընդունէ։

Որքան աւելի դեմօկրատ կազմ ստանայ Ռուսաստանը, այնքան աւել քիչ շահ ունի արևմտեան Եւրոպայի դեմօկրատեան, որ լեհական յեղափոխութեան հետևանք լինի լեհաստանի անջատումը ռուսական պետութիւնից։ Լեհաստանի անջատումը անհրաժեշտ էր համարւում այն ժամանակ, երբ դեռ ցնորք էր մնում ազատ Ռուսաստանի գաղափարը։ Այն ժամանակ էլ հնարաւոր էր ազատ Լեհաստան, իբրև անկախ և Ռուսաստանից անջատուած պետութիւն։ Այդ դէպքում նոյն իսկ անհրաժեշտ էր ազատ լեհաստանի գոյութիւնը, որպէս զի նա կարող լինէր ռուսական ինքնակալութեան զօրութիւնը փոքր ինչ սահմանափակել, արևմտեան Եւրոպան պաշտպանել նրա յարձակումներից, անհնար դարձնել սրբազան դաշնագրութեան կրկնումը։

Նոյնը վերաբերում է և Կովկասին։ Արևմտեան Եւրոպայի դեմօկրատիայի աչքում Կովկասի բաժանումը Ռուսաստանից, նաև Թիւրքեայի անձեռնմխելիութիւնը համարւում էր մինչև

70-ական թուականները իբրև զօրեղ միջոց ցարիզմը թուլացնելու և այդպիսով էլ դեմօկրատիայի գործը զօրեղացնելու համար։

Ռուսական յեղափոխութեան շնորհիւ այս բոլոր նկատումները կը վերացուեն, հենց որ աբսօլիւտիզմի փոխարէն իշխանութիւնը դեմօկրատիայի ձեռքը յանձնի։ Այսուհետև ոչ թէ սահմանների վրայ, այլ պետութեան ներսում կը մղի դեմօկրատիայի համար ամենակարևոր և վճռական պայքարը։ Ո՛չ միայն Ռուսաստանի բոլոր ազգութիւնների սոցիալ-դեմօկրատիայի, այլ նաև ամբողջ Եւրոպայի, նոյն իսկ ամբողջ աշխարհի սոցեալ-դեմօկրատիայի շահը պահանջում է, որ յեղափոխութիւնը բուն Ռուսաստանում որչափ կարելի է զօրեղ լինի և որչափ կարելի է դեմօկրատ բնաւորութիւն ունենայ այդ յեղափոխութեան հետևանքը։ Այդ իսկ պատճառով Ռուսաստանի բոլոր պրօլետարական կուսակցութիւնները, ինչ ազգութեան էլ նրանք պատկանելիս լինեն, կարևոր վարկեանում պարտաւոր են մի կողմը թողնել այն ամենը, ինչ կարող է թուլացնել բուն Ռուսաստանի յեղափոխութիւնը և, ընդհակառակը, ամենինչ անել, որ կարող է զօրեղացնել այդ նոյն յեղափոխութիւնը։ Նրանք լաւ պիտի գիտակցեն, որ ներքին Ռուսաստանում պէտք է որոշուի նրանց բոլորի վիճակը։ Պէտք չէ որ նրանք առաջ դնեն սեպարատիստ միտումներ և պահանջներ, նրանք պէտք է սերտ յարաբերութեան մէջ մնան բուն Ռուսաստանի սոցեալ-դեմօկրատիայի հետ և թև ու թիկունք հանդիսանան նրան։ Ոչ պակաս եռանդով էլ պիտի նրանք գործեն իրանց սեփական ազգութեան մէջ. բայց այստեղ էլ նրանք պիտի պաշտպանեն ընդհանուր պրօլետարական պահանջները, պաշտպանեն նաև ժամանակի ազգային պահանջները։ Բուն Ռուսաստանում կատարուելիք վերջնական որոշումից կախուած կը լինի և այն, թէ նրանց ազգային պահանջները ինչ վերջնական կերպարանք կընդունեն։

II

Ինչ էլ որ լինի ապագայում ռուսական ծայրագաւառներում պետական-օրինական վերջնական դրութիւնը, այնուամենայնիւ լուծուած կը լինի Ռուսաստանի ազգային հարցերի մի-

այն մի մասը, և այդպիսով ազգային հարցերն ասպարէզից բոլորովին չեն վերանայ։ Վերցնենք իբր օրինակ Կովկասը։

Մի անկախ պետութիւն կը լինի նա արդեօք, թէ «Ռուսաստանի Միացեալ Նահանգների» մի մասը—այդ միևնոյն է—հայ ազգի զրութիւնը դրանով դեռ չէ որոշւում։ Թէ Ռուսաստանում, թէ Բալկանեան թերակղզում, փոքր Ասիայում և Աւստրիայում կան խոշոր շրջաններ, որոնք չեն պատկանում բացառապէս մի ազգի, այլ զանազան ազգեր բնակւած են նրանցում խառը, դրանց բնակավայրերն իրարից բաժանելու, առանձին երկիրներ կազմելու ոչ մի հնար չը կայ։ Դրանից առաջանում են ազգային խնդիրներ, որոնք արևմտեան Եւրոպացիների համար միանգամային անհասկանալի են և որոնց լուծել արևմտեան-Եւրոպական միջոցներով-անկարելի է։ Այդ հարցերը շատ լաւ յայտնի են Աւստրիացիներին. այնտեղ Աւստրիայում բաւական ժամանակ է արդէն մարդիկ սրամիտ ու խելացի միջոցներ են առաջարկում նահանգներն ու շրջանները դարձնել ինքնավար՝ թէ տէրրիտորեալ (երկրային) տեսակէտից, թէ նրանց մէջ բնակւող խառն ազգութիւնների տեսակէտից։ *) Աւստրիական սոցիալ-դէմոքրատեան արդէն գործնականապէս իրագործել է այդ երկու տեսակի ինքնավարութիւնները կուսակցական կազմակերպութեան մէջ։ Սակայն չը նայելով որ Աւստրեան սատիկ տանջւում է իր մէջ եղած ազգային վէճերից, բուրժուական կուսակցութիւնները մինչև օրս յամառաբար դիմադրում էին ազգային ինքնավարութեան գաղափարին։ Այդ հարցում մի անգամ էլ պարզ երևում է այն ճշմարտութիւնը, որ հասարակական որևէ հարց լուծելիս ամենամեծ դժուարութիւնը կայանում է դասակարգային ոյժերի ու հաշիւների յարաբերութեան մէջ. գործնական խորհուրդներ ու միջոցներ հնա-

*) Մի երկիր կարող է ապակենտրոնացնել իր կառավարութիւնը երկու ձևով. 1) տեղական ինքնավարութիւն տալ գաւառներին, նահանգներին կամ շրջաններին, առանց ուշք դարձնելու նրանց վրայ բնակւող ժողովրդների կամ ազգերի ներքին կազմին։ Ինքնավարութեան այդ ձևը կոչւում է տէրրիտորեալ կամ երկրային. 2) կարելի է ինքնավարութիւն տալ նաև պետութեան կամ նահանգի մէջ եղած ազգերին առանձին-առանձին։ Դա էլ կոչւում է ազգային ինքնավարութիւն։ Կարող է ստեղծւել նաև ազգային ինքնավարութեան երրորդ ձև և տէրրիտորեալ, և ազգային միաժամանակ։ Այդ դէպքում նահանգն ինքնավար է, իսկ միջի ժողովուրդներն ունենում են յատուկ ներքին ծխային կամ կուրիական կազմ։

Խաժակ

ելն այնքան էլ դժուար չէ. ուր կայ ցանկութիւն, այստեղ ճանապարհ և միջոց գտնելը հեշտ է։ Եւ ընդհակառակը, երբ ցանկութիւն չը կայ որոշ նպատակի հասնելու, որքան էլ հնարւած ուղին լաւ լինի՝ գործին չի օգնի երբէք։

Տէրրիտորեալ կամ երկրային ինքնավարութիւնը միատեղ էլի, կամ հաժապատասխան է բուրժուական հասարակութեան ոգուն, որովհետև այդ ճանապարհով ամէն մի ազգ բաժանւում է միւսից և հասնում առանձնացման, ինչպէս անհատներն են։ Ընդհակառակը, ազգերի խառազ միակեցութիւնը, իրար խառնւած վիճակով, առանց հնար ունենալու բաժանել իրարից գործունէութեան շրջանները՝—այդ ձևին հակառակ է բուրժուական հասարակութեան ոգին, որը հիմնւած է մրցման, ժողովրդական զանազան խաւերի հակադրութեան վրայ։ Ճշմարիտ է՝ երբեմն-երբեմն մրցումը ծնեցնում է հակազդեցութիւն բուրժուական հասարակութեան բոլոր դասակարգերը կրկին ու կրկին ձգտում են ոչնչացնել մրցումը, որը որոշ պայմաններում վնասակար է նրանցից ամեն-մէկի համար, բայց ուներոր դասակարգերը նրա դէմ միայն մէկ միջոց ունեն—մենաւաճառութիւն կամ մենաշնորհ, մի դասակարգի, մի տեղի կամ ազգի արտօնաւորել, առաւելեալ վիճակ ստեղծել միւսների հաշւով կամ ի վնաս միւսների։ Միջնադարեան համքարութիւնները, քաղաքային արտօնութիւնները, ներկայ պաշտպանողական կամ խնամարկող մաքսերը և արտէլները և այլ բազմաթիւ փորձերը ոչ այլ ընչ են, եթէ ոչ մենաշնորհի ու արտօնութիւնների միջոցով մրցումը վերացնելու ջանքեր։

Բայց դա նշանակում է վերցնել մրցման ստեղծած հակադրութիւնները և նրանց տեղը դնել աւելի սուր և աւելի ծանր հակադրութիւններ։

Ունեոր դասակարգերից բոլորովին տարբեր կերպով է աշխատում բանւոր դասակարգը իր շարքերից ոչնչացնելու մրցումը և նրա արտադրած վնասները, դրա համար մենաշնորհ չէ առաջարկում նա այլ համերաշխութիւն։ Այդ ճանապարհով նա իսկապէս ոչնչացրեց իր սեփհական շարքերից այն հակադրութիւնները, որոնք բուրժուական հասարակութիւնը այնքան աւելի պատառ-պատառ են անում, որքան աւելի նա ձգտում է վերցնել մրցումը։

Ճշմարիտ է, պրոլետարեատի մէջ էլ ոմանք ջանքեր են անում հասնելու արտօնեալ, մենաշնորհեալ դրութեան։

Այնտեղ, ուր դեռ պրոլետարիատի շարքերում չը կայ իր սեփական դասակարգի գիտակցութիւնը, այլ դեռ ևս թագաւորում են բուրժուազիայից փոխ առնուած մտածողութեան ձևերը, և ուր բացի դրանից, հատով պայմաններ, որոնք պրոլետարիատի առանձին խաւերի համար ստեղծում են բացառապէս ձեռնտու վիճակ՝—այդտեղերում ձեռնտու վիճակում եղած աշխատաւորները ձգտում են այդ վիճակը դարձնել մենաշնորհ, փակել միւս պրոլետարների համար իրանց արհեստի մուտքը։ Այդ ձգտումը խիստ տարածուած էր մի քանի արհեստներով զբաղողների մէջ հավաքարութիւնների կոյութեան ժամանակ։ Բայց այդպիսի ձգտումները կապիտալիստական արդիւնագործութեան ժամանակ մնում են ապարդիւն. որովհետև պրոլետարական արտօնեալ շերտերը քանի գնում աւելի են վտանգի ենթարկւում երկու կողմից. նրանց թիկնակողմում աղմկում, յուզւում է աշխատանք անորոշ պրոլետարների մի ամբողջ բանակ, իսկ առջևից նրա վրայ է գալիս խոշոր կապիտալը, որ քանի գնում աւելի անողոք է դառնում, ներկայ տեխնիկայի բոլոր հզօր միջոցներով զինուած։

Պրոլետարական այդ արտօնաւորեալ շերտերը, մենակ և առանձնացած, անկարող են հանդիսանում պահպանել իրանց դիրքերը, նրանք ստիպուած են լինում իրանց կուռ ժամանակ աւելի և աւելի յաճախ օգնութեան կոչել բանւորական ամբողջ դասակարգը և վերջ ի վերջոյ ստիպուած են լինում հրաժարւել իրանց բացառիկ վիճակից և յենւել դասակարգային համերաշխութեան վրայ։

Ունևոր դասակարգերն ամենից առաջ հանդիսանում են արտօնեալ դասակարգեր. նրանց սոցիալական դիրքը հիմնուած է այն բանի վրայ, որ արդիւնագործութեան միջոցները բացառապէս նրանց ձեռքումն են։

Իսկ պրոլետարեատը, իբր բոլոր դասակարգերից ամենաստորինը, ամբողջ դասակարգով երբէք չէ կարող լինել արտօնեալ և չէ կարող կեղեքել միւս դասակարգերին։ Նա չէ կարող նոյնպէս խլել պետական իշխանութիւնը այն նպատակով որ հին արտօնութիւնների և մենաշնորհների տեղը դնէ նորերը։

Ընդհակառակը, նա կարող է խլել պետական իշխանութիւնը միայն նրա համար, որ վերջ դնէ բոլոր արտօնութիւններին, բոլոր մենաշնորհներին, որոց թւում և առանձին ազգերի մենաշնորհներին։ Այդ պատճառով՝ եթէ որ ունևոր դասակարգերն ազգերի մրցման փոխարէն անհրաժէշտաբար ուզում են դնել իրանց ազգի մենաշնորհն ու արտօնութիւնը, պրոլետարիատ դասակարգը նոյնպիսի անհրաժէշտութիւնով ուշ կամ շուտ դնում է. ազգային մրցման ու ազգային թշնամանքի փոխարէն, միջազգային համերաշխութիւնը։

Սկզբներում, իհարկէ, պրոլետարների մէջ ամեն տեղ գոյութիւն է ունենում ազգային թշնամութիւնը, որ հետևանք է նրանց ազգային մրցման։ Ուր որ բարեհաջող հանգամանքները թոյլ են տալիս պրոլետարիատին ձեռք բերելու գոյութեան և աշխատանքի լաւագոյն պայմաններ, այնտեղ կապիտալիստների դասակարգը ձգտում է նորից զրկել նրանց այդ վիճակից։ Այդ բանում ամենասիրելի միջոցներից մէկն այն է որ բուրժուազեան գործ է ածում յետամնաց բանւորական ուժ—կանանց և երեխաների, անվարժ և գիւղական բանւորների, և վերջապէս ուրիշ ազգութիւնների բանւորների ուժը, յատկապէս այն ազգութիւնների, որոնք դեռ նոր են ոտ դրել կապիտալիստական կեղեքման ուղին և որոնց բանւորները դեռ չեն պատվաստուած կուռելու այդ կեղեքման դէմ։

Բնական է, որ բարձր կանգնած բանւորները ջանք են գործ դնում պաշտպանելու իրանց լաւագոյն դիրքերը, և նրանք իրաւունք էլ ունեն այդ անելու։ Բայց կարճատեսութիւն կը լինէր և վատ հետևանքներ կունենար, եթէ այդ բանում բանւորներն օրինակ երցնէին բուրժուական ոստիկանական պետութեան մէթոդներից և պահանջէին դուրս նետել բոլոր նոր բանւորական ուժերը, ոչ մի նոր ուժ չընդունել։

Միայն մի մէթոդ իրական է և արդիւնաւոր. դա նա է, որ նոր մրցակիցներին ձգում է համերաշխութեան շրջանի մէջ, կազմակերպում է նրանց, գործադուլի ու վարձագին ցածրացնողից դարձնում է նրանց ընկեր ու գործակից։ Այդպէս պէտք է վարուել և կանանց, և անվարժ բանւորների, և, մանաւանդ այժմ, ուրիշ ազգութիւնների բանւորների հետ, որոնց մրցումն աճում է օր օրի վրայ, միջազգային յարաբերութիւնների զարգացման հետ միասին։ Դրամատիքական ինդուստրեան չէ կա-

ղող լայնացնել իր արդիւնքների արտահանութիւնը, եթէ որ այդ լայնացման հետ միասին և իրը հետևանք դրա, անհրաժեշտօրէն չէ աճում և հում նիւթերի, կենսական մթերքների և բանուորական ուժերի ներուծութիւնը։

Բայց որքան էլ որ թշնամաբար նայեն տեղացի բանուորները եկող բանուորների վրայ այնուամենայնիւ վերջ ի վերջոյ ամեն կողմից երևան է գալիս նրանց համերաշխութեան անհրաժեշտութիւնը։ Որ մի տեղ էական օգուտ չէ տալիս քննադատութեան չէ դիմանում նրանց հեռացնելու միջոցով մրցակիցներից իրանց ազատելու գաղափարը։

Դրանից ըստ երևոյթին բացառութիւն է կազմում այժմ «դեղին վտանգը»—չինացիների և եապօնացիների մրցումը։ Աւստրիական և ամերիկական արհեստակցական դաշնակցութիւններից շատերի «սոցիալիզմը» կայանում է նրանում, որ պահանջում են իրանց վայրերում բանեցնել միայն տեղական բանուորներ։ Բայց այդ «բացասող քաղաքականութիւնն էլ ապարդիւն է այժմ. եապօնական յաղթութիւններն սկսել են քանդել այդ քաղաքականութեան հիմքը։ Բացի դրանից՝ այդ քաղաքականութիւնը նաև անմիտ է։ Մթթէ կարելի է եապօնական և չինական ապրանքները հեռու պահել համաշխարային շուկայից։ Կը նշանակէ հարցը միայն նրանումն է, թէ ինչ ձևով է մրցում էժան, «դեղին» աշխատանքը Եւրոպականի հետ—ուղղակի՞, թէ անուղղակի։ Բայց որքան աւելի «դեղին» աշխատաւորը մտնում է անձնական բարեկամական յարաբերութեան մէջ Եւրոպական բանուորի հետ, այնքան աւելի արագ բարելաւվում են նրա համար գոյութեան պայմանները և դիմադրութեան ուժը։ Հայրենիք վերադառնալով, դեղին բանուորներն այդ բաները տարածում են և իրանց երկրում։ Եապօնեայում արդէն գոյութիւն ունի սոցիալիզմը, նա շուտով կառաջանայ և Չինաստանում։ «Դեղին վտանգի» դէմ ամենալաւ միջոցը ոչ թէ «դեղիններին» մեր երկիր գալն արգելելն է, այլ նրանց սոցիալիզմի գիրկն ընդունելը նրանց սոցիալիզմով օգնելը։

Եւրոպական բանուորների մէջ Ռուսաստանի բանուորներն առաջիններն են, որոնց համար այդ հարցը գործնական ձև է ստանում։ Սիբիրական երկաթուղին արդէն Սիբիր է ներմուծել խոշոր թիւով չինացիներ։ Ինչ էլ որ լինի Մանջուրիայի

վիճակը, պատերազմից յետոյ *) Ռուսաստանի առևտրական յարաբերութիւնները Չինաստանի հետ կը զօրանան՝, իսկ դրա հետ միասին կը սաստկանայ նաև չինական զուցէ և եապօնական բանուորական ուժերի հոսանքը դէպի Ռուսաստան։ Կազմակերպել դրանց և միացնել ժարտնչող պրոլետարական բանակին-ահա մի պատասխանատու գործ ռուս սոցիալ-դէմոկրատիայի համար։

Մի ուրիշ, դրանից ոչ նուազ դժուարին շրջանում ռուս սոցիալ-դէմոկրատիան արդէն այժմ հասկացել և իր միջազգային պարտքը կատարել է։

Կովկասեան ազգերի բազմատեսակ խառնուրդում, դեռ ևս բոլորովին անկիրթ պրոլետարների մասսաներում, որոնք պատկանում են բազմատեսակ ու տարբեր ազգութիւնների և որոնք վերջին տասնամեակում հաւաքում են հարաւային Կովկասի ինդուստրիական կենդրոնները՝—յաջողուեց ստեղծել միջազգային համերաշխութեան վրայ հիմնուած սոցիալ-դէմոկրատական մի կազմակերպութիւն և այդպիսով ստեղծուեց մի նախապատկեր Կովկասեան երկրի կառավարութեան, որը պէտք է յենուած լինի ոչ միայն երկրի ինքնավարութեան վրայ։ Բացի դրանից նա պէտք է հիմնուի նաև այն նոյն ազգերի միացեալան, նրանց հաւասարութեան վրայ՝ միասին գործելու համար։

Ես, իբրև օտար երկրացի, չեմ կարող որոշել, թէ Կովկասի պրոլետարիատի վրայ ինչ քաղաքական ազդեցութիւն ունի սոցիալ-դիմոկրատական այդ կազմակերպութիւնը և թէ ինչ քաղաքական ուժ ունի այդ պրոլետարիատը։ Բայց Կովկասի պայմաններին հիմնականապէս տեղեակ մարդն անգամ չէ կարող ասել, թէ այդ կազմակերպութիւնը և այդ պրոլետարիատն ինչ ազդեցութիւն ձեռք կը բերեն յեղափոխական շրջանում, որովհետև յեղափոխութիւններն ամենքի համար ամենամեծ անսպասելի երևոյթներ են արտադրում, և յեղափոխութեան ժամանակ պրոլետարիատը զարգանում է ուղղակի թռիչքներով։

Այդ պատճառով անկարելի է նախատեսել, թէ ինչ ձև կընդունեն ազգային հակադրութիւնները և կռիւը ռուսական

---

*) Յօդուածը գրած է ռուս եապօնական տնաւեր պատերազմը դեռ չը վերջացած։

պետութեան մէջ ընդհանրապէս և Կովկասում յատկապէս։ Բայց մի բան կարելի է դրականապէս ասել. քանի դեռ միատեղ կռիւ է մղւում հին ռէժիմի դէմ, այդ ժամանակամիջոցում ոչ միայն յեղափոխական շերտերի ընդհանուր շահն է որ ազգային հակադրութիւնները և խնդիրները հնար եղածին չափ յետ մղւեն, բայց մարտնչող պրօլէտարիատի շահն է, որ իր շարքերում թագաւորէ միջազգային լիակատար համերաշխութիւն։ Պրօլէտարիատի համար այդ համերաշխութիւնը պայմանաւորւում է ոչ միայն րոպէի դրութիւնից, բայց դա նրա համար կենսական անհրաժեշտութիւն է, ամենօրեայ կռւի կարիք։ Ռուսաստանի պրօլետարիատի համար էլ հարցը միենոյն է։ Նա պէտք է հետևի իր խելացի կերպով հասկացւած շահերին և ամբողջ կուլտուրական աշխարհի սերունդներով մարտնչող պրօլէտարիատի մեծ օրինակին, որպէսզի կատարէ այն, ինչ որ այսօր նրանից ամենից աւելի պահանջում է Ռուսաստանի ազատութիւնը—միացնել նրա մէջ ապրող բոլոր ժողովրդին ընդհանուր կռւի հին ռէժիմի դէմ։

ԿԱՐԼ ԿԱՈՒՑԿԻ

Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм.ССР
им. А. Мясникяна

Թ Ի Ֆ Լ Ի Զ
Էլէկտրաշարժ տպարան «ՀԵՐՄԷՍ» Ընկ. Մադաթեան փող. № 5
1906 (193).

Լույս են տեսել

1. *Բախ.*—Հարուստներ և աղքատներ (սպառ.) 20 կոպ.
2. *Պեշեխոնով.*—Հաց, լույս և ազատություն . 12 »
3. *Փեղոբովիչ.*—Ինչպես են ժողովում և ծախսում ժողովրդական փողերը . . . 5 »
4. *Կարմելիկ.*—Նոր լեռան քարոզը . . . 2 »
5. *Զերնով.*—Գիւղացին և բանուորը . . . 15 »
6. *Պերներատորքեր.*—Ազգային հարցը և սոցիալ-դեմոկրատիան . . . 5 »
7. *Պրամպոլինի.*—Գիւղացիներին . . . . 5 »
8. *Ն. Թոփչեան.*—Արհեստակց. միութիւններ 15 »
9. *Սովետորժսկի.*—Ի՞նչ է իրաւական պետութ. 15 »
10. *Ս. Կարանով.*—Հողային հարցը Նոր Զելանդիայում . . . . . 2 »
11. *Ժան Ժորէս.*—Բուրժուական սեփականութիւն և նրա ապագայ գրաւումը . . . 5 »
12. *Կարլ Կաուտսկի.* — Ազգութիւնների հարցը Ռուսաստանում . . . . . 3 »

Տպագրւում են եւ շուտով լույս կտեսնեն

1. *Ա. Անարոնիան (Զարիր).*—Ազատութեան ճանապարհին։
2. *Ա. Արեղեան.*—Դեմոկրատ. ընտրութիւններ։
3. *Բախ.*—Հարուստներ և Աղքատներ II տպագ.։
4. *Ալֆոնս Դիւնան.*—Ժողովրդական օրէնսդրութիւնը Զուիցերիայում։
5. *Փ. Լասալ*—Սահմանադրութեան էութեան մասին

Պատրաստւում են տպագրութեան համար մի շարք ուրիշ գրքեր։

Ցանկացողները դիմեն «Ցառաջ»-ի խմբագրատուն
Փրկչինսկայա № 6.

«Ազգային գրադարան»
NL0192201